



ՏԱԹԵՎԻԿ ՎԱՐՂԱՆՅԱՆ

Բեյջինգի տեխնոլոգիայի և բիզնեսի համալսարանի հետազոտող

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Միգրացիան ժողովրդագրական իրավիճակի փոփոխություններ ի հայտ բերող երեք բաղադրիչներից մեկն է ծնելիության և մահացության հետ միասին: Միևնույն ժամանակ, միգրացիան ժողովրդագրական երեք գործոններից ամենաբարդն է՝ չափելու, մոդելավորելու և կանխատեսելու համար: Հայաստանի պարագայում առկա է ժողովրդագրական բավական լուրջ ճգնաժամ՝ պայմանավորված ինչպես Հայաստանի մշտական բնակչության թվի, այնպես էլ ծնելիության ընդհանուր գործակցի նվազման միտումներով: Այս պարագայում արդիական է դառնում Հայաստանի բնակչության թվի կանխատեսումը, ինչը հնարավորություն կտա վերակառուցել ժողովրդագրական պետական քաղաքականությունը: Հայաստանի բնակչության թվի կանխատեսման՝ հեղինակի ստացած արդյունքների հիման վրա ներկայացվել են մեր երկրում միգրացիոն քաղաքականության բարելավման հիմնական ուղիները, որի հենքը միգրացիայի թիրախային և հասցեական պետական կարգավորումն է:

Հիմնաբառեր. MORTPAK համակարգչային ինտեգրացված ծրագրային փաթեթ, ժողովրդագրական կանխատեսումներ, կյանքի որակի գնահատում, միգրացիայի պետական կարգավորում, հավասարակշռված միգրացիոն քաղաքականություն

JEL: J08, J18

Գրականության ակնարկ: Տնտեսագիտական գրականության մեջ չկա միասնական մոտեցում, ըստ որի հնարավոր կլինի համապարփակ ներկայացնել «միգրացիա» եզրույթը: Ընդհանուր առմամբ, բավականին դժվար է

սահմանել «միգրացիա» և «միգրանտ» հասկացությունները: ՄԱԿ-ի փորձագետները կարծում են, որ միջազգային միգրանտը իր մշտական բնակության հասցեն փոխած անձն է՝ անկախ միգրացիայի դրդապատճառներից և օրինական կարգավիճակից: Տարբերակվում են կարճաժամկետ (3-12 ամիս), ժամանակավոր ու երկարաժամկետ (12 ամիս և ավելի) և մշտական միգրացիայի տեսակները¹: Ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) սահմանման՝ աշխատանքային միգրանտ է մի երկրից մյուսը տեղափոխված անձը, որը մեկնել է բացառապես աշխատելու նպատակով²: Սահմանումը չի ներառում աշխատանքային միգրացիան երկրի ներսում, ինչը ևս բավականին տարածված է և երկրում առկա բազմաթիվ սոցիալ-տնտեսական խնդիրներ է մատնանշում:

Ղ.Մասսեյը գնահատել է, որ միջազգային միգրացիան սահմանվում է չկապակցված տեսություններով, և չկա դրա վերաբերյալ համապարփակ մոտեցում³: Մի շարք տնտեսագետներ,⁴ որպես անձի միգրացիայի հիմնական դրդապատճառ, ներկայացնում են «հրող» (push) և «քաշող» (pull) գործոնները: «Հրող» գործոնների դեպքում երկրի ներսում իրավիճակը մարդկանց ստիպում է լքել հայրենիքը, իսկ «քաշող» գործոնները ներկայացվում են ավելի դրական տեսանկյունից:

Համաձայն *Հիքս-Լինդալի* տեսակետի՝ եթե եկամտի մեծացման իմաստով կա զուտ տնտեսական առավելություն, ապա աշխատուժը միտված կլինի մի բնակավայրից դեպի այլ՝ ավելի եկամտաբեր բնակավայր տեղափոխվելուն⁵: Այս սահմանումն ամբողջությամբ արտահայտում է միգրացիայի տնտեսական էությունը, այդուհանդերձ, զուտ տնտեսական առավելության առկայությունը ոչ միշտ է բավարար միգրացիայի կանխման համար: Համաձայն *Ջ.Գերբերի* մոտեցման՝ իմիգրացիայի աճը ենթադրում է բարձր եկամուտներ միգրանտների համար, ինչպես նաև ցածր աշխատանքային ծախսեր և որակավորված կադրերի լայն ընտրության առկայություն ընկերությունների համար, բայց այն նաև ենթադրում է բարձր մրցակցություն աշխատանքի շուկայում և, անխուսափելիորեն, սոցիալական լարվածության ուժեղացում⁶:

Այսպիսով, միջազգային միգրացիայի վերաբերյալ դիրքորոշումները, տեսություններն ու մոտեցումները բազմաթիվ են: Սակայն դրանք ծառայում են որպես տեսական ուղեցույց, որը հնարավորություն է տալիս գնահատելու աշխատուժի միջազգային միգրացիայի ազդեցությունը ինչպես առանձին երկրների, այնպես էլ ամբողջ համաշխարհային տնտեսության վրա:

¹ <https://refugeesmigrants.un.org/definitions>

² St'u Convention concerning Migration for Employment (Revised 1949) (Entry into force: 22 Jan 1952), Article 11:

³ St'u International Migration and Migration Theories, A.A.I.N. Wickramasinghe, Wijitapure Wimalaratana, Social Affairs. Vol.1, No.5, 13-32, Fall 2016, էջ 14: [http://socialaffairsjournal.com/Achive/Fall_2016/2.International%20Migration%20and%20Migration%20Theories_A.A.I.N.Wickramasinghe_W.%20Wimalaratane_SAJ%201\(5\).pdf](http://socialaffairsjournal.com/Achive/Fall_2016/2.International%20Migration%20and%20Migration%20Theories_A.A.I.N.Wickramasinghe_W.%20Wimalaratane_SAJ%201(5).pdf):

⁴ St'u **Gerber J.**, International Economics, sixth edition, San Diego State University, 2014, by Pearson Education, էջ 85, **Moon B.**, Paradigms in migration research: exploring "moorings" as a schema. Progress in Human Geography. Vol.19, No4, 1995, էջ 507:

⁵ St'u **Higs -Lindal and Kim S.J.**, Human Capital Flight: Impact of Migration on Income and Growth, International Monetary Fund Staff Papers, 2010. Vol. 42(3):

⁶ St'u **Gerber J.**, International Economics, sixth edition, San Diego State University, 2014, by Pearson Education, էջ 10:

Մեթոդաբանություն: Սույն վերլուծության համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են ծառայել հայագգի և արտասահմանցի տնտեսագետների աշխատությունները, գիտական կազմակերպությունների մշակումները, դասական և ժամանակակից տնտեսագիտական տեսությունների հիմնադրույթները, աշխատուժի միգրացիայի ոլորտը կարգավորող միջազգային կոնվենցիաները, ոլորտին առնչվող մասնավոր կազմակերպությունների հաշվետվությունները, Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալները և այլն:

Բնակչության թվաքանակի հեռանկարային կանխատեսման համար կարելի է օգտագործել տարբեր մեթոդներ, այդ թվում և՛ լայն կիրառություն ունեցող՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից մշակված MORTPAK համակարգչային ինտեգրացված ծրագրային փաթեթը, որը կիրառելի է հատկապես զարգացող երկրներում ժողովրդագրական չափումների համար: Ծրագրային փաթեթը ներառում է ժողովրդագրական վերլուծությունների 17 մոդել՝ ժողովրդագրական կանխատեսումների, կյանքի սպասվող տևողության, մշտական բնակչության թվի, մահացության և ծնելիության մակարդակների կանխատեսումների և այլնի վերաբերյալ:

ՄԱԿ-ի ժողովրդագրական հիմնադրամի կանխատեսումների՝ միջազգայնորեն ընդունված մեթոդը լայն կիրառություն ունի շահառուների շրջանում և հիմնված է նախորդ ժամանակահատվածի ժողովրդագրական և մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների միտումների վրա: Այս պարագայում որպես խնդիր կարող է դիտարկվել այն, որ ծրագրային փաթեթով կանխատեսումներում հաշվի չեն առնվում նախանշվող ժողովրդագրական նոր քաղաքականության գործադրման հարվածային ազդեցությունները:

Հայաստանի բնակչության թվի կանխատեսումը

1850 թ. տնտեսագետ *Ֆ. Բաստիան* առաջադրեց «ջարդված պատուհանի» ձևակերպումը, որն արտացոլում է տնտեսագիտության տարածված տեսակետներից մեկը՝ ցանկացած աղետ նպաստում է տնտեսության զարգացմանը: Դիրքորոշումները Բաստիայի պարադոքսի նկատմամբ տարբեր են: Նույնիսկ *Պ. Կրուզմանը* 2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո դրանք գնահատեց որպես ԱՄՆ-ի տնտեսության ակտիվության հնարավորություն⁷, ինչի համար, իհարկե, բազմիցս քննադատվեց: Հայաստանի համար ներկայիս միգրացիոն գործընթացները նմանօրինակ աղետ են, հետևաբար, անհրաժեշտ են ջանքեր, որպեսզի Հայաստանի միգրացիոն քաղաքականության հեռանկարները «ջարդված պատուհանի» էֆեկտով ծառայեն, այլ ոչ թե հանգեցնեն երկրի ապաբնակեցմանը:

Հայաստանում 2018 թ. ապրիլին տեղի ունեցած իրադարձություններից հետո 2019 թ. փետրվարի 8-ին հաստատվեց ՀՀ Կառավարության նոր ծրագիրը⁸, որով նախատեսվում է մշակել ու կյանքի կոչել ծնելիության խրախուսման, երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության նոր ծրագրեր, ինչպես նաև՝ թիրախային ծրագրեր հայրենադարձ ընտանիքների համար: Այս պարագայում MORTPAK համակարգչային ինտեգրացված ծրագրային փաթեթով իրականացված կանխատեսմանը զուգահեռ անհրաժեշտ


⁷ Reckonings; After The Horror, By PAUL KRUGMAN. September 14, 2001

[https://www.nytimes.com/2001/09/14/opinion/reckonings-after-the-](https://www.nytimes.com/2001/09/14/opinion/reckonings-after-the-horror.html?n=Top%2FReference%2FTimes+Topics%2FSubjects%2FS%2FSept.+11%2C+2001)

[horror.html?n=Top%2FReference%2FTimes+Topics%2FSubjects%2FS%2FSept.+11%2C+2001](https://www.nytimes.com/2001/09/14/opinion/reckonings-after-the-horror.html?n=Top%2FReference%2FTimes+Topics%2FSubjects%2FS%2FSept.+11%2C+2001)

⁸ <https://www.gov.am/am/gov-program/>

է հաշվի առնել նաև ժողովրդագրական քաղաքականության բարեփոխումների նոր միջոցառումների գործադրման ազդեցությունը: Հեղինակի կողմից իրականացվող կանխատեսման համար ընտրվել է MORTPAK համակարգչային ինտեգրացված ծրագրային փաթեթի STABLE մոդելը, որը հնարավորություն է տալիս բնակչության թիվը կանխատեսել՝ հիմք ընդունելով մահացության մակարդակի բաշխումն ըստ տարիքային խմբերի և բնական հավելաձի տեմպը:



Գծապատկեր 1. ՀՀ բնակչության թվաքանակի կանխատեսումները մինչև 2040 թ. (ՄԱԿ-ի մեթոդաբանությամբ, հազ. մարդ)

Արդյունքում ՄԱԿ-ի մեթոդաբանությամբ երկու սցենարների դեպքում Հայաստանում կանխատեսվում է բնակչության թվաքանակի նվազում: Հոռետեսական սցենարի դեպքում, 2017 թ. համեմատ, 2040 թ. ՀՀ մշտական բնակչության թիվը նվազելու է շուրջ 12%-ով՝ կազմելով 2616 հազար մարդ: Իսկ լավատեսական սցենարով, 2017 թ. համեմատ, 2040 թ. ՀՀ մշտական բնակչության թիվն աճելու է ընդամենը 1.7%-ով՝ հասնելով 3023 հազար մարդու:

Կյանքի որակի գնահատման անհրաժեշտությունը

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ թեև ժողովրդագրական փոփոխությունների առաջնային գործոններն են բնական հավելաձև ու միգրացիան, սակայն ժողովրդագրական զարգացումների վրա, բացի դասական մակրոտնտեսական ցուցանիշներից, էական ազդեցություն ունի նաև «միջավայրային» ենթակառուցվածքային գործոնների համախումբը: Նշված շրջանակը էապես բնութագրվում է կյանքի որակի ցուցանիշներով, որոնք կիրառվում են սոցիալ-տնտեսական առաջանցիկ զարգացում ունեցող երկրներում: Կյանքի որակի պարբերական գնահատումները կատարվում են մասնավորապես Եվրոստատի կողմից և մեթոդաբանությամբ սահմանված կյանքի որակը պայմանավորող հետևյալ գործոններով՝ պետական կառավարման համակարգ, շրջակա միջավայր, բնակարանային պայմաններ, կենսամակարդակ, անվտանգություն, սոցիալական հարաբերություններ, զբաղվածություն, ժամանակի օգտագործում, կյանքից բավարարվածություն, կրթություն, առողջապահություն: Կյանքի որակը տվյալ պահի դրությամբ անհատի ուղղա-

կի և անուղղակի կենսամիջավայրերի համատեքստում որոշակի ֆունկցիոնալության և անհատի արժեհամակարգով ու ընկալումներով պայմանավորված գիտակցված բավարարվածության աստիճանն է⁹: Հայաստանի համար միգրացիոն քաղաքականության մշակմանը զուգահեռ անհրաժեշտ է ներմուծել և ներդնել կյանքի որակի գնահատման գաղափարը, ինչպես նաև հասկանալ երկրում կյանքի որակի բարձրացման կարևորությունը: Ընդհանուր առմամբ, կյանքի որակը պայմանավորող գործոնները ուղղակի ազդեցություն կարող են ունենալ ինչպես երկրի միգրացիոն տրամադրվածության, այնպես էլ ծնելիության բարձրացման ուղղություններով: Կյանքի որակի գնահատման մեթոդաբանության հիմքում այն մոտեցումն է, որ պարզապես մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճը ոչ միշտ է ուղեկցում երկրում մարդկանց բարեկեցության բարձրացմանն ու տնտեսության զարգացմանը: Կյանքի որակի գնահատմանը զուգահեռ շրջանառվում է նաև ներառական տնտեսական աճի գաղափարը¹⁰, որն ընդգրկվել է նաև ՀՀ Կառավարության ծրագրում:

ՄԱԿ-ի գլխավոր տնտեսագետներից *Թ. Պալանիվելը* սահմանում է, որ աճը ներառական է, երբ տեղի է ունենում այն ոլորտներում, որտեղ աղքատներն աշխատում, ապրում են (քիչ ռեսուրսներ ունեցող չզարգացած տարածքներ), օգտագործվում են աղքատների արտադրական ռեսուրսները (չորակավորված աշխատանք), ինչպես նաև նվազում են այն ապրանքների գները, որոնք աղքատները սպառում են (սնունդ, վառելիք, հագուստ և այլն)¹¹:

Այսպիսով, կյանքի որակի գնահատման արդյունքում բացահայտվում են հասարակության խոցելի խմբերը, որոնց միգրացիայի դիմելու հակվածությունը մեծ է: Հասարակության խոցելի խմբերի շարժունակությունը կանխելու համար ելքը ազգային տնտեսության վերակառուցումն է ներառական տնտեսական աճի ապահովման հայեցակարգով: Վերջին հաշվով, ցանկացած երկրի, այդ թվում՝ Հայաստանի պարագայում, արժանապատիվ աշխատանքի և մարդկային ներուժի իրացման միջավայրի ստեղծումը բերելու է ծնելիության մակարդակի աճին, արտագաղթի կանխարգելմանն ու ներգաղթի խթանմանը:

Միգրացիոն գործընթացների արդյունավետ կառավարում

Հայաստանում վառ ընդգծված են միգրացիոն գործընթացները, որոնք իրենց ուղղակի և անուղղակի ազդեցությունն են թողել երկրի սոցիալ-տնտեսական միջավայրի վրա: Հետևաբար, Հայաստանում միգրացիոն գործընթացների պետական կարգավորումը բազմակողմանի մոտեցում է պահանջում՝ ներառելով երկրի միջազգային հարաբերությունները, տնտեսությունը, ֆինանսները, կրթությունը, սոցիալական պաշտպանությունը: Հայաստանի համար միգրացիոն գործընթացների կարգավորումը մեծ կարևորություն ունի պետական մարմինների բոլոր օղակների կտրվածքով, ինչը հնարավորություն կտա արդյունավետորեն վերահսկել միգրացիոն հոսքերը, իրականացնել պարբերական մշտադիտարկում և կառավարել դրանք:

«Միգրացիոն հոսքերի կառավարում» և «միգրացիոն քաղաքականության կարգավորում» երևույթների ֆունկցիոնալ տարանջատումների ապա-

⁹ Quality of Life, Eurostat - http://ec.europa.eu/eurostat/cache/infographs/qol/index_en.html

¹⁰ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից մեկը՝ «Խթանել կայացած, ներառական և կայուն տնտեսական աճ, լիարժեք և արտադրողական զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար»:

¹¹ http://www.undp.org/content/dam/india/docs/consultation_on_conceptualizing_inclusive_growth.pdf

հովուճը ավելի հստակ է դարձնում իրականացվող միջոցառումների շրջանակը: Այս հասկացությունները, իհարկե, ունեն շատ «հատումներ», բայց միգրացիոն հոսքերի կառավարման համար հարկավոր է մշակել միակենտրոն կարգավորման մոդել, անհրաժեշտության դեպքում՝ կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումներով: Միգրացիոն հոսքի կառավարման դեպքում Հայաստանում ինստիտուտների կամ մարմինների մեծ քանակը, այսինքն՝ գործընթացի բյուրոկրատացումը, միայն բարդացնելու է խնդրի լուծման հնարավորությունները: Զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում սկսել են գործել 7 միգրացիոն ռեսուրս-կենտրոններ, որոնք ստեղծված թե՛ զԺ միջոցով խորհրդատվություն են տրամադրում արտագնա աշխատանքի մեկնողներին¹²: Բայց, հաշվի առնելով Հայաստանում միգրացիայի բարձր մակարդակը, կարևոր է նմանօրինակ ռեսուրս-կենտրոնների կարողությունների հզորացումը՝ մասնագետների վերապատրաստման, իրազեկման աշխատանքների փաթեթի, ինչպես նաև մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնման հաշվին: Ռեսուրս-կենտրոնների հիմնական գործունեության ուղղությունը պետք է լինի, առաջին հերթին, ԵԱՏՄ անդամ երկրներում, ապա նաև այլ երկրներում թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկության հավաքագրումը: Սա անհրաժեշտ է զուգակցել հավանական միգրանտների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի մշակման աշխատանքների հետ: Հատուկ մշակված համակարգը հնարավորություն կտա գտել և ընտրել տվյալ հաստիքին հարմար թեկնածուներին, որից հետո համապատասխան մասնագետը պետք է պատրաստի պայմանագրերը, կազմակերպի աշխատող միգրանտների վերապատրաստում: Միգրացիոն գործընթացների կարգավորման տեղեկատվական համակարգի մշակմամբ և կիրառմամբ Հայաստանից գնացողներին համապատասխան տեղեկություն կտրամադրվի օտարերկրա պետությունների մասին, իսկ Հայաստան վերադառնալու ցանկություն ունեցողներին՝ Հայաստանի վերաինտեգրման խնդիրների և հնարավորությունների մասին: Այսպիսով, ձևավորվում է հստակ սահմանված ֆունկցիոնալ բաշխմամբ գործնական քայլերի համակարգ, որոնց հաջողականությունն ապահովում է միգրացիոն հոսքերի կառավարելիություն ու կարգավորում:

Հայաստանից մեկնող միգրանտների համար թիվ մեկ հիմնախնդիրը շարունակում է մնալ միգրանտների աշխատանքային իրավունքների պաշտպանությունը: Այս ուղղությամբ Հայաստանի համար բավական արդյունավետ կիրառվող գործիք կարելի է դիտարկել երկրների հետ երկկողմ համաձայնագրերը (bilateral agreements), որոնց շնորհիվ հնարավոր է ապահովել միգրանտի աշխատանքի թափանցիկ ու վերահսկվող գործընթաց:

Այսպիսով, կանոնավոր միգրացիան խթանելու, արտագնա աշխատանքային միգրանտների իրավունքներն արտերկրում պաշտպանելու և օտարերկրյա գործատուի հետ Հայաստանի քաղաքացու աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտից հետո նրա վերադարձը ապահովելու համար մեծ հնարավորություն է ընձեռում աշխատուժի շարժը կարգավորող միջազգային պայմանագրերի կնքումը Հայաստանից աշխատուժ ընդունող հիմնական, ինչպես նաև ներուժային երկրների հետ: 2018 թ. նման պայմանագիր

¹² <http://employment.am/am/75/free.html>

արդեն իսկ կնքվել է Բուլղարիայի հետ,¹³ որով ակնկալվում է մշտական էմիգրացիայի կամ անկանոն էմիգրացիայի հոսքերի նվազեցում՝ դրանք փոխարինելով աշխատուժի ժամանակավոր և կարգավորված շարժով: Հայաստանում արդի փուլում անհրաժեշտ է մշակել և իրականացնել երկրի ներքին և արտաքին էմիգրացիայի իրողություններն արտացոլող, ազգային շահերից բխող և երկրի ստանձնած պարտավորություններին համահունչ էմիգրացիայի կարգավորման հավասարակշռված քաղաքականություն¹⁴: Սա առաջին հերթին հնարավոր է միայն պետական միջոցների արդյունավետ վերաբաշխման, էմիգրացիոն քաղաքականության առավելագույն հասցեականության ապահովման միջոցով:

Եզրակացություններ, առաջարկություններ և մեկնաբանություններ: Հայաստանի էմիգրացիոն քաղաքականությունը ինստիտուցիոնալ մոտեցում է պահանջում: Այս ոլորտում կառավարչական որոշումներն անհրաժեշտ է ընդունել՝ հաշվի առնելով երկրի տնտեսական հնարավորություններն ու ներուժը: Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, որը պատասխանատու է երկրում էմիգրացիոն քաղաքականության մշակման համար, եթե նույնիսկ մշակի իդեալական ներգաղթի քաղաքականություն՝ հայեցակարգի, ռազմավարության, ընդհուպ մինչև օրենսգրքի տեսքով, այն պարզապես կմնա թղթի վրա, քանի դեռ Հայաստանի սոցիալ-տնտեսական միջավայրը բարենպաստ չէ ներգաղթի համար:

Հայաստանում էմիգրացիոն քաղաքականության մշակումը հատվածավորված է, իսկ դրա հիմնական գործառնությունները բաշխված են տարբեր նախարարությունների, պետական ծառայությունների ու գործակալությունների վրա: Փաստ է, որ էմիգրացիոն քաղաքականության շարունակական բարեփոխումները արդյունք չեն տալիս, և անհրաժեշտ են առավել համակարգային մոտեցումներ ու լուծումներ այս ուղղություններով: Կարևոր հիմնահարցեր են էմիգրացիայի վերաբերյալ միասնական տեղեկատվական շտեմարանի բացակայությունն ու վիճակագրական հավաքագրման խնդիրները: Ըստ էության, փորձագիտական կամ գիտական շրջանակներում Հայաստանում էմիգրացիոն իրավիճակի վերլուծությունն իրականացվում է առանց անհրաժեշտ, համապարփակ էմիգրացիոն վիճակագրական տեղեկատվական շտեմարանի առկայության:

Վերջին հաշվով, էմիգրացիոն քաղաքականության փոփոխությունների արդյունքը պետք է լինի պետական ծառայություն մատուցող-շահառու ամուր կապի ձևավորումը: Վերջնականպատակը պետք է լինի քաղաքացու գիտակցումը, որ դիմելով պետական մարմիններին՝ կստանա համապատասխան մասնագիտական օգնություն և խորհրդատվություն, կերաշխավորվեն նրա՝ արտասահմանում աշխատանքային իրավունքների պաշտպանությունը և բազմաթիվ այլ հնարավորություններ: Այս առումով բավական մեծ ներուժ ունի աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալությունների և պետական մարմինների միջև համագործակցության հնարավորությունների ընդլայնումը: Պետությունը պատվիրակողի դերում կարող է ստանալ աշխատանք-

¹³ Տե՛ս «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև աշխատանքային էմիգրացիայի կանոնակարգման մասին», 2018 թ. փետրվարի 12, Եր., <http://www.mfa.am/hy/country-by-country/bg/>:

¹⁴ Տե՛ս **Զ. Թադևոսյան, Կ. Հակոբյան, Ղ. Գալոյան, Լ. Աղաջանյան**, Արտագնա աշխատանքային էմիգրացիա. գնահատականներ և մտորումներ, Եր., 2014:

քի տեղավորման մասնավոր գործակալությունների մատուցած ծառայությունները:

Միգրացիոն պետական քաղաքականությունն անհրաժեշտ է մշակել՝ հստակ պատկերացում ունենալով, թե միգրանտները և միգրացիան Հայաստանի տնտեսական զարգացման համար կոնկրետ ինչ դեր ու նշանակություն ունեն: Այս հարցի պատասխանը հնարավորություն կտա Հայաստանի համար մշակել միգրացիոն քաղաքականության որոշակի մոդել: Եթե պետական քաղաքականության մակարդակով առաջնահերթություն է հայրենադարձությունը, ապա այս պարագայում քաղաքականության մշակման հեռանկարն ունի հստակ ուղղվածություն:

Հայաստանի համար միգրացիոն քաղաքականության հեռանկարների նախասահմանումն անհրաժեշտ է իրականացնել միաժամանակ գործարկվող երկու միջոցառումների ծրագրով, որտեղ կընդգրկվեն միջնաժամկետ և երկարաժամկետ ժողովրդագրական զարգացման նախագծեր: Վերջիններս հնարավորություն կտան երկրի համար հստակեցնել, թե կոնկրետ փուլում Հայաստանում ինչ քանակի և ինչ որակի աշխատուժ է ակնկալվում արտասահմանից: Բացի դրանից, անհրաժեշտ է հաշվի առնել Հայաստանի աշխատանքի շուկայի պահանջները, ֆինանսատնտեսական հնարավորությունները, զբաղվածության ընդհանուր ռազմավարությունը: Տնտեսական բարեփոխումների մշակումն ու իրականացումը Հայաստանում անհրաժեշտ է զուգակցել ժողովրդագրական միտումներով, հակառակ դեպքում՝ կխորանա աշխատանքի շուկայում առանց այդ էլ առկա աշխատանքային ռեսուրսների առաջարկի և պահանջարկի անհավասարակշռությունը:

Հայաստանի համար վերադարձի միգրացիայի պետական ծրագիրը անհրաժեշտ է սկսել անմիջապես օդանավակայանում՝ հայրենադարձին կամ հայրենադարձի ընտանիքին դիմավորելուց մինչև մեկ տարի շարունակական մշտադիտարկման արդյունքում կայուն ինտեգրման ապահովում: Այս նպատակով յուրաքանչյուր միգրանտին կամ ընտանիքին կարող է կցվել անհատական խորհրդատու, որը մեկ տարվա ընթացքում կդառնա միգրանտի և նրա ընտանիքի հիմնական կապող օղակը Հայաստանի իրականության և հնարավորությունների հետ:

Հայաստանի միգրացիոն համայնապատկերի հեռանկարի համար օրակարգային է միգրացիոն գործընթացների պետական կարգավորմանն ընթացիկ ակտիվ միջամտությունը, առաջին հերթին՝ ինչպես Հայաստանից մեկնողների, այնպես էլ հայրենադարձների հարցերով զբաղվող պետական մարմինների կարողությունների զարգացման հաշվին: Այս առումով համագործակցության հնարավորություններ կարող են առաջարկել նշված հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալությունները՝ որպես արտագնա կամ ներգնա աշխատանքների հետ կապված միջնորդական ծառայություններ մատուցող կառույցներ: Սակայն պետական մարմինների միջև գործընկերային հարաբերությունները գրեթե զարգացած չեն այս ուղղություններով:

Հայաստանում թիրախային, հասցեական և ճշգրիտ հաշվարկված միգրացիոն քաղաքականության հիմքը պետք է լինեն երկու առանցքային հենասյուներ. շատ կարևոր են Հայաստանից մեկնող միգրանտների համար օժանդակ հմտությունները՝ նպատակակետ երկրում նոր կյանքին պատրաստվելու առումով, քանի որ դրանք վճռորոշ դեր են խաղում ինտեգրման հարցում

(նման հմտություններից են վերլուծական կարողությունները, միջանձնային և հաղորդակցման հմտությունները, ցանցեր ստեղծելու և թիմով աշխատելու, խնդիրներ լուծելու, ժամանակը տնօրինելու, հաղորդակցվելու, սովորելու և հարմարվելու կարողությունները), ինչպես նաև իրավիճակին հարմարվելու և սեփական աշխատանքը կազմակերպելու հմտությունները:

Միգրացիան պետք է ճանաչվի որպես ազգային անվտանգության և ռազմաքաղաքական բնույթի խնդիր: Միգրացիայի կարգավորման բազմաթիվ ու տարատեսակ խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է այս ոլորտում միասնական ու ամբողջական պետական քաղաքականություն սահմանել և իրականացնել հզոր ինստիտուցիոնալ նախապայմաններ ստեղծել: Կարևոր է հստակեցնել միգրացիայի պետական քաղաքականության սկզբունքները, նպատակներն ու ակնկալվող արդյունքները, հիմնական միջոցներն ու ուղղությունները, ինչպես նաև ծրագրային միջոցառումներն ու դրանց մշտադիտարկման համակարգը: Սա ժամանակի հրամայականն է, և այլընտրանք չկա:

Օգտագործված գրականություն

1. «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև աշխատանքային միգրացիայի կանոնակարգման մասին», 2018 թ. փետրվարի 12, Եր., <http://www.mfa.am/hy/country-by-country/bg/>:
2. Թադևոսյան Ջ., Հակոբյան Կ., Գալոյան Դ., Աղաջանյան Լ., Արտազնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ, Եր., 2014:
3. Convention concerning Migration for Employment (Revised 1949) (Entry into force: 22 Jan 1952), Article 11.
4. International Migration and Migration Theories, A.A.I.N. Wickramasinghe, Wijitapure Wimalaratana, Social Affairs. Vol.1 No.5, 13-32, Fall 2016, էջ 14:
[http://socialaffairsjournal.com/Achive/Fall_2016/2.International%20Migration%20and%20Migration%20Theories_A.A.I.N.Wickramasinghe_W.%20Wimalaratane_SAJ%201\(5\).pdf](http://socialaffairsjournal.com/Achive/Fall_2016/2.International%20Migration%20and%20Migration%20Theories_A.A.I.N.Wickramasinghe_W.%20Wimalaratane_SAJ%201(5).pdf).
5. International Economics, sixth edition, Gerber J., San Diego State University, 2014, by Pearson Education, Inc., Moon B., Paradigms in migration research: exploring "moorings" as a schema //Progress in Human Geography, V.19, No4, 1995.
6. Hiqs-Lindal and Kim S.J., Human Capital Flight: Impact of Migration on Income and Growth, International Monetary Fund Staff Papers, 2010, vol. 42(3).
7. Reckonings; After The Horror, By PAUL KRUGMAN, September 14, 2001,
<https://www.nytimes.com/2001/09/14/opinion/reckonings-after-the-horror.html?n=Top%2FReference%2FTimes+Topics%2FSubjects%2FS%2FSept.+11%2C+2001>.
<https://www.gov.am/am/gov-program/>
8. Quality of Life, Eurostat,
http://ec.europa.eu/eurostat/cache/infographs/qol/index_en.html.
9. http://www.undp.org/content/dam/india/docs/consultation_on_conceptualizing_inclusive_growth.pdf
10. <http://employment.am/am/75/free.html>
11. <https://refugeesmigrants.un.org/definitions>

ТАТЕВИК ВАРДАНЯН*Приглашённый учёный Пекинского университета технологии и бизнеса*

Возможности улучшения миграционной политики Республики Армения.– Миграция, наряду с рождаемостью и смертностью – одна из трех составляющих, выявляющих изменения демографической ситуации в стране. Среди трех демографических факторов миграция является самым сложным при измерении, моделировании и прогнозировании. В случае с Арменией наблюдается достаточно серьезный демографический кризис, обусловленный тенденциями как снижения числа постоянного населения Армении, так и общего коэффициента рождаемости. В этом случае актуальным становится прогнозирование населения Армении, что даст возможность перестроить демографическую государственную политику. На основании результатов проведенного автором прогноза численности населения Армении, были представлены основные пути улучшения политики миграции Армении, основой которой является целевое и адресное государственное регулирование миграции.

Ключевые слова: *MORTPAK интегрированный компьютерный пакет программного обеспечения, демографические прогнозы, оценка качества жизни, государственное регулирование миграции, сбалансированная миграционная политика.*

JEL: J08, J18

TATEVIK VARDANYAN*Visiting Scholar at Beijing Technology and Business University*

Opportunities of Improving Migration Policy in the Republic of Armenia.– Migration, along with fertility and mortality, is one of the three components that reveal changes in the demographic situation in the country. Among the three demographic factors, migration is the most difficult to measure, model and predict. In case of Armenia, there is a rather serious demographic crisis, due to the trends of both the decrease in the number of permanent population of Armenia and the overall fertility rate. In this case, forecasting the population of Armenia becomes relevant which will make it possible to restructure the demographic policy of the state. Based on the results of the author's forecast of the population of Armenia, the main ways to improve the migration policy of Armenia have been presented in the article.

Key words: *MORTPAK integrated computer software package, demographic forecasts, quality of life assessment, government regulation of migration, balanced migration policy.*

JEL: J08, J18